համար, որոնց ուղղությամբ քայլեր ձեռնարկելով՝ հաստատուն պիտի մնանք մեր իրավունքների պաշտպանության դիրքերում: Մեր գերագույն նպատակը Հայրենիքի եւ մեր Եկեղեցու, հոգեւոր եւ ազգային մեր կյանքի, մեր հավատքի պայծառությունն է, որ ամեն ժամ վկայվի գործերով, սիրով ու արդարությամբ միմյանց հանդեպ:

Միրելինե՛ր, տարեմուտի սեմին մեր աղոթքը բարձրացնենք առ Աստված եւ հայցենք կարոտյալներին աջակցություն, վշտացյալներին՝ մխիթարություն, հիվանդներին՝ ապաքինություն: Հայցենք նոր հաջողություններ, նոր ձեռքբերումներ ու հաղթանակներ մեր ժողովրդին:

Դիմավորենք Նոր տարին լավատեսությամբ, մեր հույսերն ու տեսիլքները իրագործելու հավատով: 2010 թվականը նշանակալի դարձնենք ազգային մեր կյանքում՝ ի սեր մեր օրհնյալ գալիքի: Եւ թող տոնականությամբ սկսվող Նոր տարին լինի փառքով լուսազարդ, բարիքով առատ, արդար ու բարի գործերով պայծառ նոր ընթացք մեր կյանքի:

Թող Հայր Աստծո սերը, Քրիստոս մեր Տիրոջ շնորհն ու Սուրբ Հոգու առաջնորդությունը լինեն մեզ հետ այսօր եւ միշտ. Ամեն:

Շնորհավոր Նոր տարի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻՆ

Դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին գործերի նախարար Անվար Մուհամմեդ Գարգաշին՝ ուղեկցությամբ Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վահագն Մելիքյանի:

Ողջունելով պետնախարարի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց այն հոգածության ու բարի վերաբերմունքի համար, որ Էմիրությունների իշխանությունները ցուցաբերում են տեղի հայ համայնքի հանդեպ, ինչը եւս մեկ ապացույցն է երկու ժողովուրդների միջեւ բարեկամության եւ երկու կրոնների միջեւ դրական երկխոսության ու խաղաղ համակեցության:

Պետնախարար Գարգաշն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին հանդիպման համար եւ ներկայացրեց Հայաստան իր այցի նպատակն ու անելիքները:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Մայր Աթոռի թանգարաններում: